ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԳԼՈՒԽԿՈՏՐՈՒԿԸ. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

DOI: 10.52174/2579-2989_2024.1-5

Հիմնաբառեր. *տնտեսական աճ, հանքարդյունաբերություն, մշակող արդյունաբերություն, մրցունակություն, ոսկու սինդրոմ, անորոշություն*

Նարինե ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2021 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ, ապա ընդունվել մագիստրատուրա՝ «Մակրոտնտեսական վերլուծություն» կրթական ծրագրով: 2024 թ-ից սովորում է ՀՊՏՀ ասպիրանտուրայում:

2020 թ.-ից աշխատում է Enlight հանրային հետազոտությունների կենտրոն ՀԿ-ում՝ որպես տնտեսագետ-վերլուծաբան: Միաժամանակ, ներգրավվել է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական խմբերում՝ որպես հրավիրյալ փորձագետ:

Հեղինակ է 10-ից ավելի գիտական հրապարակումների, ինչպես նաև համահեղինակ՝ մեկ կոլեկտիվ մենագրության:

https://orcid.org/0000-0003-0272-5868

Արդեն երկրորդ տարին է՝ շարունակվող բարձր տնտեսական աճի համապատկերում թեժ քննարկումներ են ընթանում տնտեսական աճի, դրա իրատեսականության, ճշմարտացիության և, ի վերջո, ներառականության շուրջ:

Քննարկման առանցքում գրանցվող բարձր աճի հետքն է. արդյո՞ք այդ աճն իր դրոշմը թողնում է մեզանից յուրաքանչյուրի կյանքում, որքանո՞վ է դա համաչափ բաշխված տնտեսության ենթաճյուղերի միջև, արդյո՞ք կարելի է այս աճի հետ երկարաժամկետ հույսեր կապել...

Անվերջանալի թվացող այս հարցերի պատասխանները փորձենք ներկայացնել հոդվածաշարի այս և հաջորդող համարներում՝ թիրախավորելով աճը պայմանավորող ճյուղերի առավել ուշագրավ զարգացումներն ու վեր հանելով հիմնական ակնկալիքները:

Արդյունաբերության ոլորտի հայաստանյան զարգացումները շատ հաճախ դրամատիկ են ու անկանխատեսելի: Փոքր բաց տնտեսություն լինելու, փոքրաթիվ գործընկերներից մեծ կախվածություն ունենալու հանգամանքը, գերտաքացած աշխարհաքաղաքական իրողությունների խաչմերուկում մանևրելու փորձերը դարձել են տնտեսության այս ոլորտի շրջման կետը՝ փոքր ցնցումների դեպքում անգամ դա քաշելով դեպի «անդունդ»:

Հետհայացք նետելով նախորդ տարվա տնտեսական զարգացումներին՝ իրավամբ կարող ենք վկայել, որ վերոնշյալը ոչ թե դեպքերի վառ գունապնակներով ներկայացում է, այլ իրականության պարզեցված արտացոլում:

Այս պարագայում առաջանում է հետևյալ տրամաբանական հարցադրումը. ինչն է ընկած այս անկումների ու վերելքների շղթայի հիմքում...

Վերջին 3 տարիներին արդյունաբերության զարգացումների «ոդիսականը» մասնատենք մի քանի ենթափուլերի և դրանցից յուրաքանչյուրում առանձնացնենք այն դեպքերի շղթան, որոնք պայմանավորել են դրանք:

Անկում՝ առանց արգելակման

Արդյունաբերության աճի կառուցվածքում վերջին տարիներին, ավանդաբար, առաջատար դիրքում է եղել մշակող արդյունաբերությունը, որին հակառակ՝ աճը զսպող և ներքև քաշող հիմնական գործոնը հանքարդյունաբերության՝ մինչ օրս չդադարող անկումն է: Անկման այս փուլը մեկնարկեց 2021 թվականի կեսերին, մինչդեռ նախորդող մի քանի տարիներին արդյունաբերության այս ենթաճյուղի ծավալներն աճել են հիմնականում երկնիշ թվերով: Վերջին երկու տարիներին նվազել է նաև պղնձի արտահանումը Հայաստանից, որը ներքին արտահանման կառուցվածքում զբաղեցնում էր վերին հորիզոնականները:

Հանքարդյունաբերության անկման չդադարող ալիքը, որը սկսվել էր 2021 թվականի օգոստոսին, տևեց մինչև 2023 թվականի հունիսը՝ բացառությամբ մի քանի ամիսների:

Վերջին երեք տարիների ընթացքում ամենաէական անկումը գրանցվել է 2022 թ.-ի մարտին: Դրական շարժընթաց արձանագրվեց 2023 թվականի հուլիսին, որը խաթարվեց արդեն հոկտեմբերին՝ տարին ամփոփելով հանքարդյունաբերության ոլորտի մոտ 6.4% անկմամբ:

Եթե դիտարկենք ամբողջ արդյունաբերության աճը, ապա մարտին գրանցված կտրուկ աճից հետո (որը հիմնականում պայմանավորված էր նախորդ տարվա ցածր բազայի ազդեցությամբ) ապրիլին տեմպն էականորեն դանդաղել է՝ տեղափոխվելով բացասական տիրույթ և կազմելով -0.8%: Արդյունքում հունվար-ապրիլին արդյունաբերության աճի տեմպը նույնպես դանդաղել է՝ կազմելով 2.4%:

Արդյունաբերության ոլորտում հունիսին գրանցվել է շուրջ 7.4% անկում, որը նույնպես կարող է պայմանավորված լինել բազայի էֆեկտով, քանի որ նախորդ տարվա հունիսին գրանցվել էր էական աճ՝ շուրջ 19.2%: Միաժամանակ, հունվար-հունիսի տվյալների համաձայն՝ արդյունաբերության աճը կազմել է ընդամենը 1.0%, որը բավական ցածր ցուցանիշ է՝ հաշվի առնելով տնտեսության ընդհանուր աճի տեմպը և արդյունաբերության կարևորությունը՝ որպես արտահանելի ճյուղ: Արդյունաբերության կշռի նվազումը տնտեսությունում նշանակում է ՀՀ տնտեսական ներուժի նվազում, ինչը բացասաբար կանդրադառնա երկարաժամկետ տնտեսական աճի վրա:

2023 թ. հունվար-դեկտեմբերին արդյունաբերության աճը կազմել է ընդամենը



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Արդյունաբերության և դրա ենթաճյուղերի աճն ըստ ամիսների, 2021-2023 թթ.[1]

[1] ՀՀ վիճակագրական կոմիտե, հրապարակումներ՝ ըստ տարիների, https://armstat.am/am/?nid=82



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Արդյունաբերության և դրա ենթաճյուղերի աճը, կուտակային, 2021-2023 թթ.[2]

4.1%, այն դեպքում, երբ ՏԱՑ-ը 9.4% էր: Ընդ որում, այս միտումը շարունակվել է ամբողջ տարվա ընթացքում: Այսինքն՝ արդյունաբերության կշիռը նվազել է տնտեսության կառուցվածքում, ինչը երկարաժամկետում բացասական երևույթ է և կարող է հանգեցնել տնտեսության ներուժի նվազմանը:

Արդյունաբերության ոլորտում 2023 թ. նոյեմբեր-դեկտեմբերին գրանցվել է աճի կտրուկ արագացում[3]: Դրա պատճառը ոսկերչական արտադրատեսակների արտադրության բավական բարձր աճն է, ինչի պայմաններում 2023 թ. նոյեմբերին արդյունաբերության աճը կազմել է 23.8%, իսկ դեկտեմբերին՝ 20.0%: Արդյունքում արդյունաբերության աճը հունվար-դեկտեմբերին կազմել է 4.1%՝ հունվար-նոյեմբերի համեմատ արագանալով 2.0 տոկոսային կետով, սակայն էականորեն ցածր մնալով նախորդ տարվա աճի ցուցանիշից: Սա հիմնականում ոսկերչական իրերի ներմուծման, վերամշակման և արտահանման գործընթաց է, որը, բնականաբար, կարող է կարճաժամկետ լինել, հետևաբար՝ տնտեսական ակտիվության աճի արագացումը նույնպես կլինի կարճաժամկետ:

Արդյունաբերական արտադրանքի իրա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Արդյունաբերական արտադրանքի իրացման աճը (%) և նպաստումները, 2023 թ.[4]

[2] ՀՀ վիճակագրական կոմիտե, հրապարակումներ՝ ըստ տարիների, https://armstat.am/am/?nid=82

[3] ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ.հունվար-դեկտեմբերին, https://armstat.am/am/?nid=82&id=2635

[4] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման 2023 թվականի հունվար-դեկտեմբերին, https://armstat.am/am/?nid=82&id=2632, հեղինակի հաշվարկներ:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

ՀՀ ՀՆԱ աճն ըստ ճյուղերի, 2023 թ.[5]

ցումը դիտարկելիս կարող ենք տեսնել, որ գրեթե ամբողջ տարվա ընթացքում նկատվել է արդյունաբերական արտադրանքի արտաքին պահանջարկի անկում: Ներքին պահանջարկը նույնպես նախորդ տարում շարունակաբար նվազել է, սակայն նոյեմբեր-դեկտեմբերին իրավիճակը բարելավվել է՝ հանգեցնելով ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պահանջարկի աճին: Կշեռքի նժարի նման շրջումը, իրավամբ, պայմանավորված է տարեվերջին ի հայտ եկած ու լայն քննարկման առարկա դարձած «ոսկու սինդրոմով», որին կանդրադառնանք հաջորդիվ:

2023 թ.-ի համար ՀՆԱ և ճյուղերի աճը դիտարկելիս կարող ենք նկատել, որ արդյունաբերության աճն ընդգծված կերպով դանդաղման միտում է ունեցել՝ արդեն, ըստ 9 ամսվա արդյունքի, նույնիսկ գրանցելով 0.8% անկում, ինչը շուրջ 0.2 տոկոսային կետով բացասաբար է ազդել արդյունաբերության աճի վրա՝ քաշելով դեպի ներքև: Իհարկե, 4-րդ եռամսյակում հայտնված գործոնները միայն 4-րդ եռամսյակում են հանգեցրել արդյունաբերության մոտ 7.2%, իսկ տարեկան կտրվածքով՝ 1,7% աճի:

Բնապահպանականից մինչև աշխարհաքաղաքական անորոշություն

Թեղուտ, Սոթք, Ամուլսար. այս անունները, թերևս, վերջին տարիներին դարձել են հանքարդյունաբերության ոլորտի ամենաթեժ քննարկման թեմաները. բնապահպանականից մինչև աշխարհաքաղաքական անորոշություն և ռիսկեր, խնդիրներ, որոնք ավելի են ճնշում արդյունաբերության այս հիմնաքարային ենթաճյուղի՝ առանց այն էլ սեղմված շղթան:

Թեղուտ: Հանքարդյունաբերության ոլորտի աշխուժացման հիմնական խոչընդոտը, թերևս, բնապահպանական տեսանկյունից առաջացման ենթակա ռիսկերն են, որոնց մասին շարունակ բարձրաձայնում են բնապահպանները, ոլորտի փորձագետներն ու ակտիվիստները: Այդ առաջացող ռիսկերը մեղմելու նպատակով էլ 2022 թ.-ի մարտին դադարեցվել էին Թեղուտի լեռնահանքային համալիրի հանքաքարի արդյունահանումն ու վերամշակումը՝ պլանային-կանխարգելիչ մասշտաբային վերանորոգման աշխատանքներով պայմանավորված:

Ուշագրավ է, որ, համաձայն իրական շահառուների հայտարարագրի, «ՎՏԲ բանկ» ՓԲԸ-ն «Թեղուտ» ՓԲԸ բաժնեմասում 49,95% մասնակցություն ունի, հետևաբար՝ Ռուսաստանի նկատմամբ Արևմուտքի կողմից կիրառվող պատժամիջոցների ազդեցությունից այս ընկերությունը նույնպես չէր կարող անմասն մնալ[6]: Հատ կապես հետաքրքրական է, որ ընկերությունը նախատեսում էր այս աշխատանքները կատարել 2022 թ. մայիս-հունիսին, սակայն, աշխարհաքաղաքական նոր զարգացումներով պայմանավորված, մա-

[5] ՀՀ վիճակագրական կոմիտե, Ազգային հաշիվներ, ՀՆԱ, https://armstat.am/file/doc/99545173.xls

տակարարման շղթաների խաթարումն արագացրեց դրանց մեկնարկը[7]: Ընդ որում, ընկերությունը պլանավորել էր հանքաքարի արդյունահանումն ու վերամշակումը վերսկսել միայն պատրաստի արտադրանքի մատակարարման նոր շղթաների կառուցումից հետո: Մինչև 2022 թ.-ին «Թեղուտ» ՓԲԸ աշխատանքների դադարեցումն ընկերության արտադրանքն իրացվում էր մեկ գնորդի[8]: Մատակարարման շղթաների վերակառուցման արդյունքում գնորդների թիվն այժմ 6 է՝ ներառելով ընկերություններ Իրանից, Չինաստանից և Ռուսաստանից ու փորձելով բազմազանեցման (դիվերսիֆիկացման) ճանապարհով չեզոքացնել մատակարարման շղթաների խափանման ռիսկերը:

Թեղուտի աշխատանքները վերսկսվեցին միայն 2023 թ. հուլիսի երկրորդ կեսին: Ընդ որում, համաձայն ընդերքօգտագործման պայմանագրի և օգտակար հանածոների արդյունահանման թույլտվության, որը «Թեղուտ» ՓԲԸ-ն ստացել է 2023 թ. օգոստոսին, ընկերությունն իրավունք ունի մինչև 2031 թ. իրականացնելու 105 մլն տոննա արդյունահանում[9]:

Ամուլսար: Հանքարդյունաբերության աճի վերականգնման հույս են ներշնչում նաև Ամուլսարի հանքի շուրջ զարգացումները: Դեռևս 2023 թ.-ի փետրվարին ՀՀ կառավարության, Եվրասիական զարգացման բանկի և «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի միջև ստորագրվել էր եռակողմ փոխըմբռնման հուշագիր, որը քանդեց Ամուլսարի հանքավայրի շահագործման կապանքները՝ փոխարենը ՀՀ կառավարությանը հանձնելով «Լիդիան Արմենիայի» բաժնետոմսերի 12.5 տոկոսը[10]: Այս տարվա հունվարին հայտարարվեց, որ շինարարական աշխատանքներն ավարտական փուլում են, և հանքն արդեն կշահագործվի ընթացիկ տարում[11]:

Սոթք: 2020 թ.-ին Արցախի գերակշիռ մասի, իսկ արդեն 2023 թ.-ի սեպտեմբերին՝ տարածքի ամբողջությամբ բռնի օկուպացումից հետո, Սոթքի հանքավայրի նկատմամբ Ադրբեջանի հավակնությունների, ինչպես նաև մինչ օրս շարունակվող սահմանային լարվածություն հրահրելու Ադրբեջանի փորձերի հետևանքով ոսկու հանքավայրում աշխատանքները պարբերաբար դադարում են՝ ակնհայտորեն ազդելով հանքարդյունաբերության ծավալների վրա: Ավելին, 2023 թ.-ի ապրիլին Սոթքի հանքը դադարեցրել է իր գործունեությունը՝ անվտանգային չնվազող ռիսկերով պայմանավորված[12]: Սա մեծ հարված էր ինչպես արդյունաբերության ճյուղի, այնպես էլ ամբողջ տնտեսության համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սոթքի հանքավայրը շահագործող ընկերությունը՝ «Գեոպրոմայնինգ» ՍՊԸ-ն, 1000 խոշոր հարկատուների ցանկում մշտապես եղել է առաջատար հորիզոնականներում[13]: Ուշագրավ է նաև այն, որ Սոթքի հանքի փակման շուրջ խոսել են տարբեր մակարդակի պաշտոնատար անձինք՝ շեշտելով տնտեսական աճի վրա դրա հնարավոր բացասական ազդեցությունը: Հետաքրքրական է, որ դեռևս 2023 թ.-ի հոկտեմբերին[14] հայտարարվել էր, որ հանքի աշխատանքները չեն դադարել, և այն շահագործվում է փակ ձևով: Այս առումով, կարևոր ենք համարում նշել, որ 2023 թ.-ի ապրիլից մինչ օրս հանքը փաստացիորեն չի շահագործվել անգամ փակ տարբերակով, և հանքաքար չի արդյունահանվել: 2022 թ. սեպտեմբերին ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը դրական եզրակացություն է տվել ստոր-

---

[6] Թեղուտ ՓԲԸ, Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր, https://www.e-register.am/am/companies/1472849/declaration/663f1ecd-346b-43eb-8fa6-d3ee4ff537ea

[7] Թեղուտի հանքավայրը կաշխատի պոչամբարի պատվարի ամրացումից և պատրաստի արտադրանքի մատակարարման նոր շղթաների կառուցումից հետո, https://hetq.am/hy/article/142288

[8] Թեղուտի կոմբինատն աշխատում է ամբողջ ծավալով, իսկ պոչամբարի պատվարի ամրացման աշխատանքները շարունակվում են, https://hetq.am/hy/article/164125

[9] Նույն տեղում:

[10] Ամուլսարի հանքի շահագործմամբ Հայաստանի ՀՆԱ 1 տոկոսի աճ է կանխատեսվում. ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր, https://armenpress.am/arm/news/1104789/

[11] Ամուլսարի հանքի շահագործումը նախատեսված է 2024 թվականի ընթացքում, https://news.am/arm/news/747291.html

[12] Սոթքի բաց հանքի աշխատանքը դադարեցվել է. պատճառն ադրբեջանական հրետակոծություններն են, https://armeniasputnik.am/20230530/svotqi-bac-hanqi-ashkhatanqy-dadarecvel-e-hajtni-e-pattshary-60400241.html

[13] Հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկեր, https://src.am/am/getMenusContents/120

[14] Սոթքի հանքավայրի փակ հատվածը շարունակում է աշխատել. մարզպետ, https://armeniasputnik.am/20231013/svotqi-hanqavajri-pak-hatvatsy-sharunakum-e-ashkhatel-marzpet-67226784.html

գետնյա եղանակով հանքի շահագործման մասին[15]՝ մինչև 2031 թ.-ը 400 հազար տոննա հանքաքար արդյունահանելու իրավունքով: Հանքի վերագործարկումը նախատեսվում է 2024 թ. մարտին[16], ինչը որոշ չափով հույս է ներշնչում հանքարդյունաբերության ոլորտի անկման տեմպերը կասեցնելու ուղղությամբ:

«Ոսկու սինդրոմ»

2023 թ. արդյունաբերական տարին առանձնացավ ևս մեկ իրողությամբ՝ ոսկու թողարկման կտրուկ աճով: Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանը շեշտակիորեն ավելացրել է ոսկու արտահանումը, պետք է ասենք, որ սա ամենևին էլ պայմանավորված չէ Հայաստանում արդյունահանվող ոսկու ծավալների աճով, այլ Ռուսաստանից ներկրվող ոսկու վերաարտահանմամբ: Այսինքն՝ վիճակագրական տեսանկյունից, դա հանգեցնում է թողարկման ծավալների աճի (ինչը նոյեմբեր-դեկտեմբերին արտացոլվեց տնտեսական ակտիվության ցուցանիշում), սակայն ստեղծում է անհամեմատ փոքր ավելացված արժեք, այսինքն՝ համախառն ներքին արդյունքի աճի տեսանկյունից, ոսկու շուրջ ձևավորված այս աղմուկն ամենևին էլ իրատեսական չէ, ինչն արտացոլվեց նաև արդեն փետրվարին հրապարակված՝ ՀՆԱ տարեկան ցուցանիշում:

Իհարկե, վերջին եռամսյակում նշմարվում է արդյունաբերության բարձր աճ՝ մշակող արդյունաբերության (հատկապես՝ ոսկերչության) աճի արդյունքում, սակայն դա որքան էլ ցանկալի, նույնքան էլ կասկածելի ցուցանիշ է՝ հաշվի առնելով, որ ոսկերչության ենթաճյուղի աճը գերազանցապես կապված է վերաարտահանման հետ:

ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ ադամանդը ՀՀ է ներմուծվում հիմնականում ՌԴ–ից՝ չմշակված տարբերակով, իսկ ոսկին՝ ձուլակտորներով՝ վերաարտահանվելով հիմնականում Արաբական Միացյալ Էմիրություններ և Հոնկոնգ[18]: Ասվածն ավելի պատկերավոր կարող ենք մեկնաբանել հետևյալ կերպ. քանի դեռ ռուսական շուկան կրում է Արևմուտքի պատժամիջոցների ծանր բեռը, հայկական շուկան կշարունակի մնալ ռուսական թանկարժեք մետաղների «լվացման» յուրօրինակ աղբյուր: Ուստի ավելի քան տրամաբանական է, որ արտահանման նման ճանապարհով աճը չի կարող կայուն ու երկարաժամկետ բնույթ կրել՝ անորոշություններ ու լուրջ վտանգներ ստեղծելով նաև ՀՀ արտաքին առևտրի



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

Ոսկու թողարկման աճը, 2023 թ. նոյեմբեր-դեկտեմբեր[17]

[15] Շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության եզրակացություն, ԲՓ N 0135-22, 26.09.2022, 135-geopromining-sotq.pdf (env.am)

[16] Սոթքի հանքավայրում փակ եղանակով արդյունահանման մեկնարկը կտրվի 2024-ի մարտին. 300 աշխատակից կրճատվել է. փոխնախարար, https://lurer.com/?p=545041&l=en

[17] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-դեկտեմբերին, https://armstat.am/am/?nid=82&id=2635

համար:

Ամփոփելով նշենք, որ վերջին 2 տարիների տնտեսական զարգացումները մեկ անգամ ևս ապացուցում են, որ հայաստանյան տնտեսությունը գերազանցապես կրում է արտաքին աշխարհի ազդեցությունը, իսկ գործընկեր երկրներում ու դրանց շուրջ ծավալվող իրողությունները թելադրում են տնտեսական քաղաքականության ուղղությունները: Գրանցված բարձր աճերը որքան էլ ոգևորիչ ու ցանկալի են, նույնքան էլ անկայուն են ու անորոշ՝ հաշվի առնելով այն աղբյուրներն ու տնտեսության այն ճյուղերը, որոնք պայմանավորել են այդ աճը: Արդյունաբերության դիտանկյունից խնդիրն ավելի խորքային է. որքան էլ հանքարդյունաբերությունը «հնացած» թվա՝ աճը խթանող գործոնների տեսանկյունից, փորձը ցույց է տալիս, որ անգամ ամենաբարդ աշխարհաքաղաքական հակամարտությունների պարագայում, երբ խաղասեղանին է դրվում ցանկալի ռեսուրսների մատակարարման ու ազգերի ճակատագրի որոշման հարցը, թելադրողի դիրքում, որպես կանոն, հայտնվում են ռեսուրս արտադրողներն ու մատակարարները: Այսինքն՝ որքան էլ, բնապահպանական տեսանկյունից, հանքարդյունաբերությունը դիտվի որպես ոչ ցանկալի երևույթ, պետք է գիտակցել, որ ռեսուրս արտադրող աշխարհի բազմաթիվ երկրներ անցել են կանաչ արդյունաբերության՝ կիրառելով նորագույն տեխնոլոգիաներ ու նվազագույնի հասցնելով բնապահպանական ռիսկերը: Ինչ վերաբերում է ՀՀ արդյունաբերության աճի հիմնական խթան համարվող մշակող արդյունաբերությանը, պետք է ասենք, որ դա նույնպես գերազանցապես կրում է պահային գործոնների ազդեցությունը, ինչի վառ վկայությունը նոյեմբեր-դեկտեմբերի զարգացումներն էին: Ուստի, ինչպես արդեն նշել ենք, ավելի քան տրամաբանական է, որ տնտեսական աճի, թողարկման, արտահանման՝ գերազանցապես արտաքին բարենպաստ գործոններով պայմանավորված աճերը չեն կարող կայուն ու երկարաժամկետ բնույթ կրել, ինչը անորոշությունների ու լուրջ վտանգների առջև կկանգնեցնի նաև ՀՀ արտաքին առևտուրը:

[18] ՀՀ վիճակագրական կոմիտե, արտաքին առևտրի տվյալների բազա, https://armstat.am/am/index.php?nid=717&thid%5B%5D=784&thid%5B%5D=344&years%5B%5D=2023&year%5B%5D=2023&monid%5B%5D=1&monid%5B%5D=2&monid%5B%5D=3&monid%5B%5D=4&monid%5B%5D=5&monid%5B%5D=6&monid%5B%5D=7&monid%5B%5D=8&monid%5B%5D=9&monid%5B%5D=10&monid%5B%5D=11&monid%5B%5D=12&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC&offset=1

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամուլսարի հանքի շահագործմամբ Հայաստանի ՀՆԱ-ի 1 տոկոսի աճ է կանխատեսվում. ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր, https://armenpress.am/arm/news/1104789/
2. Ամուլսարի հանքի շահագործումը նախատեսված է 2024 թվականի ընթացքում, https://news.am/arm/news/747291.html
3. Թեղուտ ՓԲԸ, Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր, https://www.e-register.am/am/companies/1472849/declaration/663f1ecd-346b-43eb-8fa6-d3ee4ff537ea
4. Թեղուտի կոմբինատն աշխատում է ամբողջ ծավալով, իսկ պոչամբարի պատվարի ամրացման աշխատանքները շարունակվում են, https://hetq.am/hy/article/164125
5. Թեղուտի հանքավայրը կաշխատի պոչամբարի պատվարի ամրացումից և պատրաստի արտադրանքի մատակարարման նոր շղթաների կառուցումից հետո, https://hetq.am/hy/article/142288
6. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-դեկտեմբերին, https://armstat.am/am/?nid=82&id=2635
7. Հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկեր, https://src.am/am/getMenusContents/120
8. ՀՀ վիճակագրական կոմիտե, Ազգային հաշիվներ, ՀՆԱ, https://armstat.am/file/doc/99545173.xls
9. ՀՀ վիճակագրական կոմիտե, Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման 2023 թվականի հունվար-դեկտեմբերին,

https://armstat.am/am/?nid=82&id=2632
10. ՀՀ վիճակագրական կոմիտե, արտաքին առևտրի տվյալների բազա, https://armstat.am/am/index.php?nid=717&thid%5B%5D=784&thid%5B%5D=344&years%5B%5D=2023&year%5B%5D=2023&monid%5B%5D=1&monid%5B%5D=2&monid%5B%5D=3&monid%5B%5D=4&monid%5B%5D=5&monid%5B%5D=6&monid%5B%5D=7&monid%5B%5D=8&monid%5B%5D=9&monid%5B%5D=10&monid%5B%5D=11&monid%5B%5D=12&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC&offset=1
11. ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ.-ի հունվար-դեկտեմբերին, https://armstat.am/am/?nid=82&id=2635
12. ՀՀ վիճակագրական կոմիտե, հրապարակումներ՝ ըստ տարիների, https://armstat.am/am/?nid=82
13. Շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության եզրակացություն, ԲՓ N 0135-22, 26.09.2022, 135-geopromining-sotq.pdf (env.am)
14. Սոթքի բաց հանքի աշխատանքը դադարեցվել է. պատճառն ադրբեջանական հրետակոծություններն են, https://armeniasputnik.am/20230530/svotqi-bac-hanqi-ashkhatanqy-dadarecvel-e-hajtni-e-pattshary-60400241.html
15. Սոթքի հանքավայրի փակ հատվածը շարունակում է աշխատել. մարզպետ, https://armeniasputnik.am/20231013/svotqi-hanqavajri-pak-hatvatsy-sharunakum-e-ashkhatel-marzpet-67226784.html
16. Սոթքի հանքավայրում փակ եղանակով արդյունահանման մեկնարկը կտրվի 2024–ի մարտին. 300 աշխատակից կրճատվել է. փոխնախարար, https://lurer.com/?p=545041&l=en

Нарине ПЕТРОСЯН
Аспирант, АГЭУ

ПУЛЬС ЭКОНОМИКИ

ГОЛОВОЛОМКА ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА. ПО СЛЕДАМ ПРОМЫШЛЕННОСТИ

В условиях высокого экономического роста, который длится уже второй год, продолжаются жаркие дискуссии об экономическом росте, его реалистичности, правдивости, ценности и, в конечном итоге, инклюзивности.

В центре дискуссии – след, оставленный высокими темпами роста. Оставляет ли этот рост свой след в жизни каждого из нас, насколько равномерно он распределяется по подотраслям экономики, можем ли мы иметь долгосрочные надежды на этот рост…

Ответы на эти, казалось бы, бесконечные вопросы, мы постараемся представить в этом и последующих выпусках серии статей, в которых рассматриваются наиболее примечательные события в отраслях, определяющих рост, и освещаются основные ожидания.

Ключевые слова: *экономическая активность, шоки, макроэкономическая стабильность, услуги, прогноз, перспективы*

Narine PETROSYAN
PhD student, ASUE

PULSE OF ECONOMY

THE PUZZLE OF ECONOMIC GROWTH. IN THE TRAILS OF INDUSTRY

With strong economic growth now in its second year, heated debate continues about economic growth, its feasibility, truthfulness, value and ultimately, inclusiveness.

The debate centers on the mark left by high growth rates. Does this growth leave its mark on the lives of each of us, how evenly is it distributed across sub-sectors of the economy, can we have long-term hopes for this growth…

These seemingly endless questions will be addressed in this and subsequent editions of a series of articles that examine the most noteworthy developments in growth-driven industries and highlight key expectations.

Keywords: *economic growth, mining, manufacturing, competitiveness, gold syndrome, uncertainty*